ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ՀՀ ՏԿԵՆ կարիքների համար կազմակերպված «ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-26/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 30.06.2026թ.

Մասնակցում էին՝

Պատասխանատու ստորաբաժանման/ գնահատող հանձնաժողովի ղեկավար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի պետ — Ժենյա Տեր-Վարդանյան

Հայտը նախագծող անդամ՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի գլխավոր մասնագետ — Մերի Աղաջանյան

Գնման ընթացակարգի համակարգող/հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ — Զանուշ Հայրապետյան

«ՏԿԵՆ-ՄԱԾՁԲ-26/9» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի նիստի

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ:
2. Տեղեկություն հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ:
3. Տվյալներ՝ Ընթացակարգի հայտը կազմելու և ներկայացնելու՝ Ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված պայմաններին համապատասխան լինելու մասին:
4. Տվյալներ՝ Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին:
5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին:

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ծառայությունների վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման գինը.

Չափաբաժնի		*Չափաբաժնի անվանումը*
համարը	*գնման գինը ԱՄՆ դոլար (USD)*	
1	803 200	Իրավական խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ

2. Տեղեկություն հայտ ներկայացրած մասնակցի վերաբերյալ

2.1 Ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գտնվելու կամ բնակության վայրը, կապի միջոցները՝

№	Մասնակցի անվանումը	Գործունեության հասցեն	Էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար
1	«Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն» (ԻԿԱՕ)	999 Ռոբեր-Բուրասա բուլվար, Մոնրեալ, Քվեբեկ H3C 5H7, Կանադա	fem@icao.int mghattas@icao.int +1 514-954-8219

3. Տվյալներ՝ Ընթացակարգի հայտը կազմելու և ներկայացնելու՝ Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան լինելու մասին:

3.1 Մասնակցի հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին),

4. Տվյալներ՝ Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի առաջարկած գնի մասին

4.1 Ընթացակարգի շրջանակներում մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը.

Չափաբաժին 1: Իրավական խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ

№	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) ԱՄՆ դոլար (USD)	ԱԱՀ	Ընդհանուր գինը ԱՄՆ դոլար (USD)
1	2	3	4	5
1	«Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ԻԿԱՕ)	803 200	0	803 200

4.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

5.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջները՝
ա) Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ԻԿԱՕ) կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:
բ) Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ԻԿԱՕ)-ին:

5.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ անգործության ժամկետ չսահմանել:

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

5.4 Ընթացակարգի ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Որոշումն ընդունվել է՝ կողմ- 2, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրությունները՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ժենյա Տեր-Վարդանյան	.....
Հանձնաժողովի անդամ՝	Մերի Աղաջանյան	.....
Քարտուղար՝	Զանուշ Հայրապետյան	.....

[i] Սույն գնումն իրականացվում է համաձայն՝ է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ կառավարության 2026թ. ապրիլի 23-ի N 558-Ն և հունիսի 18-ի N 875-Ն որոշումների հիման վրա :